

**ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ**

**(ԽԵԻ) ՅՈՎ, ՀԱՆՆԷՍ ԹԼԿՈՒՐԱՆՑԻ**

**Մ 21.**

Պատասխանեալ հայրն ասաց. թէ չառեր պատիւ մեծութեան,  
Յակոբ ընկալաւ ըզնա, եւ կամք Տեառն եղիւ հրրաման:

**Մ 22.**

Ասէր ընդ հայրն իւր Եսաւ. են եւ քո արհնիթք զանագան,  
մի՛ զիս յարհնութեանց զըրկէր, թէ ոչ մեծ այլ կըրսերական:

**Մ 23.**

Արհնեաց Իսահակ զԵսաւ, Եսաւ չէր ի հայրն ի նրման,  
ոխացաւ ընդ Յակոբայ, եւ դարան գործէր սպանման:

**Մ 24.**

Իսկ մայրն առաքէր զՅակոբ, Լաբանայ լինել յանդիման,  
եւ ի գնալն Ետես տեսիլ, ըզսանդուխքն ի խաչն ի նրման:

**Մ 25.**

Եւ Տէր հաստատեալ ի նմա, ցուցանէր զօր խաչելութեան,  
ելեւէջնն հրեշտակաց՝ գուշակող զօր մեծ յարութեան:

**Մ 26.**

Եւ վէմն որ էաւժ խորհուրդ՝ ջըրարաշխին իսրայէլեան,  
Յակոբ մարդկութեան խորհուրդ՝ եւ աւծեալ վէմն Աստուածութեան:

**Մ 27.**

Այն վէմն ի լեռնէն հատաւ, եւ ելից զաշխարհս ամենայն,  
սա է վէմըն գլուխ անկեան, զըլորման եւ կանգնելութեան:

**Մ 28.**

Գընացեալ եմուտ յերկիրն, կայր ջըրհոր վիմով խրփական,  
եւ ոչ կարէին բանալ, մինչ հովիւք գային միաբան:

**Մ 29.**

Համբուրեաց զվէմն եւ զՀաաքէլ, եւ յիշեաց զԱստուած Սահակայն,  
եւ ի բաց էառ ըզվէմն, զոր տեսեալ մարդիկ հիացան:

**Մ 30.**

Այսպէս կենարարն երաց զաւագանըն մաքրիլ մարդկան,  
զի որք մըկըրտին յուսով, նայ հոգևով ի Տէր միանան:

Մ 21. — 1. — պատասխանեալ Սահա-  
կայ թէ առեր ... Ժ:  
Մ 22. — 1. — արհնիթք, 2. անուիթք,  
և, Եսաւ ընդ հայրն իւր ասաց թէ արհ-  
նութիւնքը քո զանագան, Ժ. արհնու-  
թիւնք, 3.  
2. — կրսերութեան, Ժ. և:  
Մ 23. — 2. — ըսպանման, Ի. և:

Մ 24. — 2. — գուշակէր ըզօրն յարու-  
թեան, Ժ:  
Մ 25. — 1. — Եւ վէմն զօր նայ էաւծ...  
2. Էօժ իւրով, խորհուրդ, և, ջըրարաշխ  
հին ... է:  
Մ 27. — 2. — ... մինչ գային հովիւքն  
ամենայն, 2. գային հովիւք, է:  
Մ 28. — 1. — Սահակեան, Է:

**ՄՁԷ.**

Կրնաց առ քեռին Լարան, եւ ստացաւ ըզգործ հովուութեան,  
զԼիա յեթն ամին էառ, եւ զՀռաքել յետ երկու եւթեանն:

**ՄՁԸ.**

Այսպէս կենարարն մեր՝ զերկինք եւ զերկիր սեպհական,  
սիրէր Յակոբ ըզՀռաքել, եւ Տէր մեր ըզագոս Յարեղեան:

**ՄՁԹ.**

Լիա չորս որդի ծնաւ, եւ անուանրն այսոր կոչեցան,  
Ռուբէն, Շրմաւոն, Ղեւի, եւ Յուդայ զաւակ խընդութեան:

**ՄՁ.**

Եւ Հռաքել նախանձ բառնայր՝ եւ նրստէր սրգով լալական,  
տըրտընջէր ըզՅակոբայ. Տո՛ւր, աւէր, պատճառ ծընընդեան:

**ՄՁԱ.**

Յակոբ ի յՍտուած ձրգէր, ի տըւող բարեացն ամենայն,  
որ Աբրահամու երեստ զԲսահակ ի ժամ ձերութեան:

**ՄՁԲ.**

Հռաքել տայ ի կընութիւն Յակոբայ զԲալլայ ծառեկան,  
յորմէ ծնաւ երկուս որդիս՝ Նեփթաղիմ, Դան անուանեցան:

**ՄՁԳ.**

Լիա ծնաւ այլ եւս որդիս՝ Զաբողոն, Սաբար կոչեցան,  
ծընաւ եւ Հռաքել զՅովսէփ, Ստուծոյ մարդոյ սիրական:

**ՄՁԴ.**

Իբրեւ զարեգակըն ճոխ, բան զլուսինն եւ այլ պիտեան.  
բաղցելոց հաց կերակրիչ, ծարաւեաց ջուր անմահութեան:

**ՄՁԵ.**

Եըրատ տայր կանանց ւ որդւոց՝ երկիւղիւ կալ աստուածական,  
ասաց թըլփատիլ նոցա, եւ յուսով զպատուէրն ընկալան:

**ՄՁԶ.**

Կրնալ ի յերկիրըն մեր՝ զայն յօժար սիրով կամեցան,  
իրբեւ թէ մի անձն եղեն, ի Հոգւոյն այսպէս յանկեցան:

**ՄՁԷ.**

Ասէր Լարան ընդ Յակոբ՝ Աստուծոյ մարդոյ սիրական,  
այսուհետեւ վարձս առցես, եւ հովիւ տեսուչ կաց ի տան:

**ՄՁԸ.**

Ասէր Յակոբ ընդ Լարան, խայտխարիքն ինձ վարձ բաւական,  
յորժամ հօտըրն ծընանին, զխայտխարիքն առից զամենայն:

ՄՁԸ. — 2. — ... զագզըն Յարեթեան, եւնոց զայն յօժար սրբաբւ կամեցան, Զ  
 Զ. Արեթեայն, ԷԺ.  
 ՄՁԹ. — ԶուՆի, Է.  
 1. — այսպէս, ԶԻՑ. այսօքիկ, Թ.  
 ՄՁԲ. — 2. — յորմէ Նեփթաղիմ ծնաւ  
 և միւսըն Դան անուանեցան, Ժ.  
 ՄՁԵ. — 1. — ի յերկիւղ, Զ.  
 ՄՁԶ. — 1. — Կրնալն ի յերկիրն իւր-  
 եանց զայն յօժար սրբաբւ կամեցան, Զ  
 սրտով, Թ.  
 ՄՁԷ. — 1. — ... շնորհազարդ և ա-  
 տուածազան, Ժ.  
 ՄՁԸ. — 1. — Ասէ, Ժ. խայտխարիքն  
 Զ.  
 2. — զխայտխարիքն, Զ.

**ՄՂԹ.**

Եւ նա ծիծաղէր զՅակոբ, զոր աւրհնէր Աստուած գորութեան,  
երբր գաւազանս առնէր, եւ յուսով դընէր յաւազան:

**Յ.**

Ընկուզի, ոշի, սոսի, եւ յուսայր յԱստուած պետական,  
եւ Տէր ներգործէր այնպէս, որպէս միտք նորա կամեցան:

**Յ.Ա.**

Եւ յորժամ ծընան այնպէս, Լարանեանքն ահի տրրտմեցան,  
եւ Յակոբ կրրէր երկիւղ: Եւ յուզի անկեալ չըւեցան:

**Յ.Բ.**

Հոարէլ գողացաւ զչաստուածսն, և ոչ ի դէմս երկրբագութեան,  
այլ յանդիմանէր զԼարան, թէ չաստուածքնն չեն գորական:

**Յ.Գ.**

Ի կտուրէն դարձաւ Լարան, եւ յուա զչուելն Յակոբեան,  
եհաս չորս հարիւր արամբբ, եւ չկարաց յաղթել Յակոբեան:

**Յ.Դ.**

Չի Տէր էր ընդ Յակոբայ, Միքայէլըն միշտ պահապան,  
ապա հաստատեալ զընայր, ըմբշամարտն անդրաքայլական:

**Յ.Ե.**

Ի կամբս սրբոի հասան, յափն եկեալ զետոյն Յորդանան,  
խորհեցան բարի խորհուրդ, զտասանորդըն տալ Եսաւեան:

**Յ.Զ.**

Չորս հարիւր մանր եւ մեծ գլուխ, ետ և արար սէր եղբայրական,  
եւ ուսոյց կանանց և որդւոցն զնա ծառայ ասել Եսաւեան:

**Յ.Է.**

Անցոյց զամենայն ընդ զետն, եւ Յակոբ մընաց նա միայն,  
ուր եւ զօտեմարտ եղեալ, զողջ զիշերն ընդ Տեառն էական:

**Յ.Ը.**

Խընդրէր զարծակիլըն Տէրն եւ Յակոբ զաւրհնիլն իւրական,  
Յակոբ խարողէն փոխեալ՝ յիսրայէլն եւ յաստուածածան:

**Յ.Թ.**

Իսկ Տէր կազացոյց զՅակոբ, մի կարծել երազ տեսութեան,  
եւ զի տեսանէ՛ Եսաւ, շիջուցէ ըզբոց խռովութեան:

**Յ.Ժ.**

Եհաս Յակոբ առ Եսաւ, եւ տեսեալ յոյժ ուրախացան,  
զիրկս արկին սիրով միմեանց, շատ լացին, բերկրեալ ջընծացան:

ՄՂԹ. — 2. — . . . գաւազան, Ի: զընէր  
 յուսով, Չ:  
 Յ. — 1. — ուշի, Ժ. յուշի, Խ:  
 ՅԲ. — 1. զաստուածսն, Չ:  
 ՅԳ. — 1. Յակոբայն, Ժ:  
 2. — Յակոբայն, Է:Ժ:  
 ՅԵ. — 2. — Եսաւայն, Է: զԵսաւայն,  
 Ժ: Եսաւան, Խ:

ՅԶ. — 2. — Եսաւայն, ՉԷԺ:  
 2. — Չուելի, Խ:  
 ՅԴ. — 1. — տեսական, Ժ:  
 2. — եւ այլ զի խոնարհ մեան, երկիւ-  
 զածք և աստուածածան, Խ:  
 3. — եւ այլ զի խոնարհ մեան, երկիւ-  
 զածքն որ աստուածածան, Ժ:

**ՅԺԱ.**

Որդին Սիւքիմայ եմովր, ընդ Դինայ դրատերն Յակորեան,  
խառնակեալ պոռնընկութեամբ, զոր լըւեալ եղբարց չարացան:

**ՅԺԲ.**

Դիպող ժամանակ գրտին, եւ զարուս նոցա զամենայն  
սըրով սըրահատ արին, եւ իշխեալ անդ հաստատեցան:

**ՅԺԳ.**

Ռուրէն յանցաւոր գրտաւ, զի գործեաց անպատշաճական,  
զի ել յանկողինըս հօրն, վասն որոյ նըզով կոչեցան:

**ՅԺԴ.**

Անդրանիկ եւ մեծ էր նա, եւ անկաւ ընդ կըրսերութեան.  
եւ հայրըն կամէր զայն տալ Յովսեփայ որ էր սիրական:

**ՅԺԵ.**

Յովսէփ արածէր ըզհօտն, եւ լին էր հոգւով զիտութեան,  
երազ տեսանէր բարի, զոր յաւուր իւրում լըրացան:

**ՅԺԶ.**

Աւրայ կապէաք ասէ, կանգնեալ իմըն հաստատեցան,  
ձեր արայքն իմ արային յերկըրպագութիւն մատուցան:

**ՅԺԷ.**

Լըւեալ տասնեցունց եղբարցն, դառնութեամբ յոյժ ժըպըրհեցան,  
ասնն թագաւոր լինիս, եւ մեր զամբ յերկըրպագութեան:

**ՅԺԸ.**

Տեսանէր միւս այլ երազ, փառաւոր եւ յորդորական,  
պատմէր հօրն իւր Յակորայ, զոր լըւեալ լընոյր խընդութեամբ:

**ՅԺԹ.**

Արեւն եւ լուսինն ասէր, եւ աստեղը փայլունը մետասան,  
առ ոտս իմ անկանէին, լինէին երկըրպագական:

**ՅԻ.**

Ասէր Յակոր ընդ Յովսէփ, Աստուծոյ մարդոյ սիրական,  
արբայ ինքնակալ լինիս, եւ պատմիս մինչեւ յաւիտեան:

**ՅԻԱ.**

Եւ ես եւ եղբարքըն քո ծառայեմք քեզ հաշտ եւ հաւան,  
լըւեալ զայս կըրկին եղբարքն, նախանծով իսկ բորբոքեցան:

**ՅԻԲ.**

Այնուհետեւ խընդրէին Յովսեփայ դիպող կորըստեան,  
զոր Տէր խընամէր սիրով, հրեշտակաց բանակը պահապան:

ՅԺԱ. — 2. — զոր տեսեալ, Ժ:	ՅԺԸ. — 2. — ... լնու ի ցնծութեամբ,
ՅԺԵ. — 1. — Յովսէփ էր ի հաւերն տան	2. — ... լնու ի ցնծութեամբ,
և լի էր ... ԺԽ:	ՅԻԱ. — 2. — լուան ... և նախանծով
ՅԺԶ. — 1. — հաստատական, ԶԺԻ:	բորբոքեցան, Խ:
2. — ձեր որայքն իմ որային, Զ:	... եղբարքն, նախանծովըն բորբոքե-
ՅԺԷ. — 1. — լըւեալ եղբայրցն բարկա-	ցան, է:
ցան, Խ:	

**ՅԻԳ.**

Աւուրք ի վերայ անցին, որպէս թէ զոխան մոռացան,  
առեալ Յովսէփ հաց խորտիկ եւ տանէր եղբարցն ամենայն:

**ՅԻԿ.**

Ձոր տեսեալ չարեօք լըցան, նախանձովն իսկ բորբոքեցան,  
հրմբ տային զայն հենգնելով, զերդ զազան չար յարձակեցան:

**ՅԻԵ.**

Կամեցան արիւն հեղուլ, բայց Ռուբէն չեղեւ կամական,  
առեալ ընկեցին ի հորն, եւ ինքեանք նըստեալ ճաշեցան:

**ՅԻԶ.**

Ասէին, լեր թագաւոր, մեր լիցուք ծառայք քեզ հաւան,  
հանեալ ի զըբոյն ապա՝ ծախեցին յերսուն դահեկան:

**ՅԻԷ.**

Առեալ տարան յեզիպտոս, դահնապետն ելեալ յերեւան,  
զընեաց եւ որդի զըրեաց, եւ պահէր ի յաչքն ի նըման:

**ՅԻԸ.**

Յովսէփ աւրինակ փրկչին, և եղբարքն իւր դատուն հրէական,  
եւ Յովսէփ իջեալ ի հորն, յեզիպտոս եւ յարգելարան:

**ՅԻԹ.**

Յիսուս ի յարգանդ կուսին, ի զըժովս յաւար և ի տապան,  
նա սովելոց հաց երես՝ Տէր զմարմինն իւր աստուածական:

**ՅԼ.**

Կինըն Պետափրեայ տեսեալ, վաւաշոտ վառէր ցանկութեամբ,  
նեղէր զողջախոսն Յովսէփ, արկանել ի գործ շընութեան:

**ՅԼԱ.**

Նա վիմի նըման անշարժ՝ թէպէտ եւ լըրբէր սատանայն,  
զընայր նա ի յանկողինն եւ խօսէր անպատշաճական:

**ՅԼԲ.**

Խորտիկ զանազան կազմէր՝ չար ղեղով ի պէտ ցանկութեան,  
թողոյր ըզհանդերծն ի նա, եւ փախչէր պարկեշտ մանուկն այն:

(23)

Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ

ՅԻԳ. — 2. — հանէր, Ը:  
 ՅԻԴ. — 1. — իսկ, չուկին, ՁթԻ. և  
 նախանձով բորբոքեցան, Խ. նախանձովըն  
 բորբոքեցան, ԷՑ:  
 2. — հըմ տային, ՁԷ. հըմքարին զայն  
 հըմքելով, Խ:  
 ՅԻԵ. — 1. — . . . զարիւնըն հեղուլ,  
 Ռուբէն . . . Խ:  
 2. — խորն, Ը. . . զբերեալ ճաշն կե-  
 րան, Խ:

ՅԻԶ. — 1. — Ասէին թէ լեր իշխան,  
 . . . ծառայ . . . , Ժ:  
 ՅԻԷ. — 1. — Առեալ յեզիպտոս տա-  
 րան, ԺԽ:  
 2. — զընեաց և որդացոյց, և պահէր  
 իւր աչքի նման, Խ:  
 ՅԻԸ. — 1. — լըրբեք, լերբ, Ձ. լերբ էր,  
 ԷԺԽ:  
 ՅԻԹ. — 1. — ի պէտս, ԺԽ: